



Հրատարակի տեմոց երկու անգամ .  
Մասրագրութեան տեղին է .

Զօհւաններ . Խասյեան լինարդոյ

Մ . Յ . Գ . Գրիգորին գրասունոց .

Պաշտոն . Քնիթերցարարոց թանգարան .

Սահման խոն , թիւ . 6 :

Մեծարքոյ զարգան առա ֆափացեան

Պահու վազոց Միակ թիւ . 7

Փորից . Ա . Խուրատեան

Մանցեսթեր , Տիրան է բիցեան .

Գանձիրէ , Շատարը և ջիմիրեան .

Հանդիսիս շրջանը թեց տեմի է .

Եշմիրի համար պին Ձ արձ . մէճիռ :

Արքէ բացարներ . Վ ալ . հետ մէճիռ :

Հանդիսիս ջերաբերեալ որ եւ . Իցէ

Կամակ պիտի ու ցցուի ու . Ապրդիս

Փափացեան .

## ՀԱՅՈՒՆ ԿԲՈՐՄԱՆԵԱՅ

ԼԻՊՈՍԱՆԱԿԱՆ , ԱՐԹԵՍԻՑ ԵՒ ԶԱՒՐՃԱՆԵԱՅ ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ ՎԱՐԴԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ԽՈՒՅԱԳԻՐ . ՏՆՈՒԵՆ . - ԱՎՐԴԻՌ ՓԱՓԱԶԵԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ԽՈՒՅԱԳԻՐ . ՏՆՈՒԵՆ ՎՐՋԱՆ

### ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ԿԱՐԺԻՔԸ

Անձնասիրութիւնն է ինքզինքը սիրել , իւր չափը ճանչնալ և իւր պատիւը պահել : Ըսով կը սորվինք , ստորին զործերէ ետ կենալ , զործուած չարեց վեհանձն ըլլալ և ամենեին չնուաստանալ : Ըսով կը սորվինք մեր ընկերները ճանչնալ , և անոնցէ չխարուիլ : Անձնասիրութիւնն է վերջապէս որ մեր քայլերը խոսոր ճամբարէն կ'ուղղէ , և մեր անձնական պատիւը պաշտպանել կու տայ : Անձնասիրութիւնն է գարձեալ որ կը սորվեցընէ մեղ սիրել մեր աղջը , մեր հայրենիքը , մեր բարեկամները : Անձնասիրութիւնն է որ կը ցուցընէ մեղ մեր անձին վայելածը զործել , մեր բերանին վայելածը խօսիլ , զրել , լսել , և վերջապէս անտարքեր չմնալ :

Այսայն ո՞րչափ անձինք այս անձնասիրութիւնն զուրկ են , քանիները սրտի այս ամենամծ զգացման անզգայ և անտարքեր են , բայց ո՞րչափ և ա-

ւելի անձինք իրենց չափը չպահելով , իրենց քերանեն ելածը չեն զիտեր , և ոչ լսածնին կըզգան :

Եւ ի՞նչ է արդեօք այս անտարքերութեան պատճառը : - Կիրք : Եւ ուսափ կը ծաղի այս կիրքը : - Անափառութենէ :

Բանագատութիւնը այնպիսի ասպարեզ մ'է , ուր գաղափարները իրարու կը շփուին , ուղիղ եղարկացութիւններ կ'ելլեն , չարեսց առաջը կ'առնուի , և մեծամեծ օգուտներ կը ծաղին : Եւ որչափ կարեսը է աղջի մը համար այս բանագատութիւնները , միւյն թէ օրինաւոր ինտիւներու վեց և իւնկեմունք ըլլան անոնչ . սակայն երբ այս բանագատութեան մէջ բծախնդրութիւններ և վրէժիքնդրութիւններ կ'ընինք , յայտ է որ մենք տակաւին խաւարեալ ենք , և տակաւին լուսաւորութեան երեսը տեսած չենք : Յայտ է որ աւելի կ'ուղինք իրարու վասահացնել , քան թէ աղջին օդտին նայիլ : Յաւալի բան , ո՞րչափ անզամ աղջային խըն .

գիր մը բծախնդրութեան և վրէժինդրութեան առարկայ եղած է, ո՞րչափ անդամ ազդին օգուտը քանի մը անձանց կրից զոհ եղած է, պատճառը՝ մեր կիրքը ազդին օգուէն նախադաս ունենալիս է, պատճառը՝ իրարու միաբան չըլլալիս, իրարու սէր և վերջապէս անձանսիրութիւն չունենալիս է, որ մեր անձնական սէրը և պատիւը պաշտպաննք :

Հանագատութեան օրէնքը կը պահանջէ խընդոյն բուն էութեան վրայ հակածառիլ, և չշեղիլ բնաւ այս էական սահմանէն, եթէ ոչ ամեննեին չենք կրնար խնդրոյն վերջը հասնիլ։ Մէկ վէճը ուրիշ վէճեր պիտի բանայ, ինտիրը պիտի քաշկը պիտի չապացուի, բծախնդրութիւններ պիտի ծագին, վրէժինդրութեան ողին պիտի մտնէ, և մեծամեծ օգուտներ պիտի զոհուին։ — Ուրեմն այս տեսակ բանագատութիւնը անօդուած է և ֆլասակար մեր ազդին համար :

Հանագատութեան մէջ ո՞ր օրէնքը կը ներէ խօսքին կարզը թողաւ, անցեալը խառնել, և ոկը սիլ փնտուել թէ ինչ յանցանք ունի հակառակորդը, և կամ աւելի պարզ ըսեմ՝ աշխատիլ թէ ինչ սատանայական սուտ զրաբառութիւններ կրնայ դնել անոր վրայ։ Ի՞նչ վերաբերութիւն ունի հակառակորդին անձնականը խնդրոյն էութեանը հետ։ Միթէ մեր հակառակորդին վրայ զրաբառութիւններ և նախատինքներ տեղացնելով դասը վաստկած կ'ըլլանք, միթէ անոր անձնական պատշոյն գոչելը մեր փաստերուն ոյժ կու տայ։ Միթէ ան է տրամագրութեան օրէնքը։ — Կերուի ինձ ըսել թէ բանագատութեան տկարութիւնն է, կամ յաղթահարուելու ամօթը, կամ սնափառութիւնը, և կամ վատութիւնն է, որ կ'ըստիակ զիերնք այս աստիճան նուաստանալ։ Քանզի աս է վերջին զէնք վատութեան, երբ վատը իր փաստերը և ապացոյները կը կորսնցընէ՝ նուաստութեան նոյն զինուց կը գիմէ, որոնք ձշմարառութեան վահանին առջեւ կը փշուին։

Լաւ է ձշմարառութեան առջեւ խոնարհիլ, և յանցանքը խօստովանիլ, քան նախատանօք վատութեան դիմել և վատ յաղթութեան վրայ պարծիլ։

Արգեօք վատութեան այս զինուց դիմողը բոլորովին անմեղ է, բոլորովին անբիծ, և ամենին չի մտածեր որ ինքն ալ մարդ է գուցէ իր հակառակորդէն աւելի սոսկալի։

Այսու ամենայնիւ պէտք չէ զարմանալ, դռե՛ չիկը իրեն բնական եղած խօսակցութիւնը ունի, և իրեն փառք և յաղթութիւն կը սեպէ, երբ բերանէն անլայել և պիղը խօսքը մը կը հանել։

բանը և զրիշը մարդուս սրտին թարդմաններն են, ուրեմն բերաննէս կամ զրիչնէս անվայել խօսք հանելով՝ ինչ աստիճանի զահչեկ ըլլալիս կը յայտնավի։

Հայց մել իբր քաղաքակրթելոցս ներելի՞ է արդեօք ամենափոքը հայչոյութիւն մը, ամենաթեթև նախատանաց խօսք մը հանել բերանննէս, ներելի՞ է արդեօք մեր ընկերին անձնական պատոյն գոչել պարզ խնդիր մը մեկնելու տաեննիս։ Կերիչի՞ է, կ'ըսեմ, մեր ընկերին սիրալը վերաբերել անտեղի սուտերով և անլայել նախատինքով։ — Ո՞ւսկից է մեր այս համարձակութիւնը։ Արգեօք մեր լրութենէն է, արգեօք ինքզինքնիս չձանչնալնէն և անձնասիրութիւն չունենալնէն է։ — Այս, եթէ փոքր ինչ անձնասիրութիւն ունենայինք պիտի չաստիճան նուաստութիւն է մեղ մեր ընկերին անձնականին գոչելու։

### Տէրան Յարակիւն Տէրեւան

### Ա Ն Ֆ Բ Է Տ Ա Կ Ի Ն Է

Կարուակութիւն (1)։

Գ Հ Ա Ւ Խ Բ ։

### Ն Ի Գ Ի Կ Ե

Ձօվեստու ծովեղերեայ գեղեցիկ և բարեձեգիրքը, այն հոյակապ և կանանաւոր շենքերուն տեսքը, մեծ ու զարգարուն պարակները և ճէմելիքները, յիրաւի տեսնողները կը սքանչացընեն։ Վթենական ձարտարապետութեամբ շնուրած գեղեցիկ տուն մը կ'երեւայ, իր սիրուն տեսքավը ընդարձակ և զարգարեալ պարտիզով աւելի զերալանցութիւն մը կը շնորհէր։ Վյու տանը մէջ կը բնակի Պարսն Ֆէրտինանդ անունով պատուաւոր ու հարուստ վաճառականը, ամէ նուն սիրելի ու գովելի եղած էր բարեգործութիւններով և ազնուական կատարելու մեջ անձնական բնական բարեգործութիւններով, մեծ ու երեկիլի առետրական յարաբե-



զուրիշը սիրել, ոչ, Ալֆրէան է միակ միսիթարութիւնն, անոր սիրտը փորձած եմ, ինչ աստիճանի առաքինի ըլլալը և անոր հետ մայսն կրնամ հանդիսաւ ու երջանիկ կեանք վարել, ինչ օգուտ, և թէ աւելի հարուստ, աւելի անուանի և առաւելուատուառը մը առնեմ և բարոյականութիւնը խանդարեալ ըլլայ, և այն քաղցր հաճութիւնը չպատճեամ ինչպէս որ հիմայ Ալֆրէտ սիրելովս կղգամ: Ո՞չ ո՞չ, ուրիշ մէկը չեմ ուզեր և ոչ Պ. Ժերամ կոմսը, թէպէտե երեւելի տիկին մը պիտի ըլլամ, աշխարհիս պերճութիւններովը փառաւորուած, ամէն գէսպերու մէ չ պատաւոր, բայց ինչ օգուտ երբ սիրտս հանդիսաւ չէ և իմ զգացմանց պատասխանու չըլլայ: Ճերամ կոմսը անդութ բնաւորութեան տէր մըն է, առաքինութեան նշոյլ մը անդամ չկայ վրան, ինչպէս կարու եմ անոր հետ կենացելու, բնաւ բնաւ, կամ Ալֆրէտ կամ ոչ մէկը, սրտիս մանկութիւնը այն զրաւեց առջի անդամ և եկաւ մտաւ հոն, ուրիշ անկարելի է ելլալը՝ ահ, Ալֆրէտ, որչափ սիրելի ես ինձ, չեմ կրնար ոչ որ քեզի նմանցընել ու հաւասարել, առանց քեզի ոչ զբուանիք մը և ոչ ուրախութենէ մը կրնամ ախարժակ առնուլ, մինակ եղած առենս կ'երեայ թէ բան մը կը պահիս ու սիրտս պարագ է: Ալ՛ր, Ալ՛ր, որչափ զօրաւոր ես, որչափ քաղցր ու դասն: Եւզինէի սէրը անչափ էր, և քանի որ իր բոլոր զգացումը Ալֆրէտին վրայ, ինչու ուրեմն իր հօրը չէր յայտնէր այս իր զիտաւորութիւնը, Եւզինէ սիրելի էր հօրը և անոր մէկ ազգաւանքը բաւական էր զանի համոզել, ինչու իր սիրտը չէր բանար, վասն զի Եւզինէ կը վախնար թէ չըլլայ որ հօրը հաճութեան գէմ զործ մը ընէ և անոր գժկոհաւութիւն կամ ցաւ պատճառէ, զի ինքը այնափ երեւելի մեծաւունիք մերժած էր և այս որոշման ընարութիւնը յարմար առիթի մը կսպասէր որ հայրը իրեն թողու:

(Եպի ընդ հոգ)

### ԵԼՎԻՓՈՒՐԱՅ

ԳԵԿԵՑԻԿԻ ՎԱՃԱՐԱԿԱԽԵ

Վարուակիւթիւն (1)

Լօնչ. Ատոր վրայ չեմ դիտեր ինչ ըսել ովեալ եմ. բայց ես Լօնչէլօն եմ, Հրէին մարդը. ու ու վկայութիւնը կրնամ բերել, որ Ճեր կինը Ալրդիսը՝ իմ մայրս է:

(1) Տիկ թիւ 3.

կօդ. Կնոջս անունը՝ իրաւ. Ալրդիսը է, երդում կ'ընեմ որ թէոր գուն Լօնչէլօն ես՝ գուն իմ մարմինս ու իմ արիւն եւա: Վայ, օրչնեալ է Աստուած, այդ ինասոր մօրուք է որ ձզեր ես, ծնոտիդ վրայ՝ կառքս քաշող ձիուս, Տատախիս պոչէն աւելի մաղ կայ:

Լօնչ. Կրնայ կարելի ըլլալ որ Տատախիդ պոչին մազերը՝ գէոլ ՚ի հաւ մեծցած ըլլան բայց Ճշմարիս կ'ըսեմ որ երբոր զան վերջին անդամ տեսայ՝ իր պոչին վրայ իմ երես ունեցածէս աւել լի մաղ կար:

կօդ. Տէ՛ր Աստուած. ադ ինչպէս փոխուեթ ես, Վարդետիդ հետ ինտոր կ'երթասկոր. իրեն պարզ մը բերի. Հիմայ ինտոր ես հետը:

Լօնչ. Ըստ աղէկի, շատ աղէկի, բայց ինձի մայ նէ՝ ինչպէս որ փախչելու համար հանդըստութիւնս կորուսեր եմ, ասանկ ալ հանդսուի պիտի չզանամ մինչեւ որ կառը մը տեղ չի փախչիմ: Վարդետա՝ բռն Հրէայ է. իրեն պարզ և տաք, իրեն չուան տուեք, որ երթայ կախուի. իրեն ձառայելով անօթութենէս կը սատկիմկոր, հայէ, սամատներուս կոկիծները նայէ: Հայը իր, չես գիտեր դալուդ վրայ ինչպէս ուրախ եղայ. այն պարզէդ իմ Աղա Պատանեօյիս տուր, որ, Ճշմարիտը, այնպէս քիչ հիւ հակուած լաթեր կը բաշնէ, որ ամեն աղաներ այնպէս չեն ըներ. թէոր իրեն քոլ ծառայութեան չի մանեմ: Աստուծոյ ստեղծածերկիծներէն ամենէ հեռուն պիտի փախչիմ: Ո՞չ, հազուագ իւտ բաղդ. աշա ըստած մարդս կուզայ կոր. իսուէ հետը հայը իմ. ինչու որ ես ասկէ տը աւելի Հրէին քով ծառայութիւն ընեմ:

Պատասխան. Ետօւածօմեւ և արէւ ստուգութիւն հէտ իւնչ:

Պատա. Ալ այնպէս ըրէ. — բայց այնպէս շուամը ընես՝ որ իբիկուան կերակուրս պինու ուշ պինու ուշ մինչեւ ժամը ընունին պատրաստ պիտի ըլլայ: Աս նամակները տեղերնին ձզէ: Կառքին սրախասութիւնները չինչել առնը. ու զնա Ալրդիս նոյին ըսէ որ Հիմայ շուամը մը բնակարան թաղ եւ լի զայ:

Լօնչ. Հետը իսուէ, հայը իմ:

կօդ. Աստուած Ճեղ կեանք ոքարգենցէ, տէր իմ:

Պատա. Անձտուկէն շնորհակալ եմ. բան մը կ'աւղեա ինձնէ:

կօդ. Աս զաւակս, տէր իմ. ինչդ աղայ մէ:

Լօնչ. Կանչալ աղայ չէ, տէր իմ, այլ հա-



շնորհք - ընես . որպէսզի , այդ արտասոց բնաւորութեամբ՝ դացած տեղս ինձի նախատինք մը չըլլայ և յոյսերս փուժի չըլլեն :

Կրա . Աղայ Պասանիօ , իս մարիկ - ըրէք , թէ որ բնութիւնս չի շոկել , յարդանօք չի խօսակցիմ , ու միայն տաեն - աբեն երգում չընեմ , ծոցիս մէ ջաղօթադիրք զործ չածեմ , ամօթխած համարութեամբ մարդու երես չի նայիմ , ասկէց զատ՝ օրհնութեան ժամանակ , զլամարկս այսպէս մինչև աչքերս ծածկելով՝ չի հառաչեմ ու Շմէն չըսեմ , մարդալարութեան բոլոր պարտաւորութիւններս չընեմ , այնպէս աշկերտի մը պէս , որ իր հանիին առջև ծանր ու երեսը - կախած կինալադաւածէ , մէկ մ'ալ երեսս մի նայիք :

Պասա . Աղէկ , տեսնենք վարմունքդ :

Կրա . Բայց , չէ , աս իրիկու չեմ սեպեր . աս զիշեր ինչ որ ընենք նէ՝ հաշուի մի դնեք :

Պասա . Չէ , անանկ բան կ'ըլլայ . ես ձեզ զի ընդ հակառակը պիտ՝ աղաչէի որ քիչ մը համարձակաբար երեսնիդ խնդացող ըլլայ . ինչու որ աս զիշեր բարեկամեր ունինք , որ զուարժառթիւն ընելու միաբ ունին : Օառայ եմ . քիչ մը դործ - ունին :

Կրա . Ես ալ Կօրէնցօին երթամ , ու նայիմ . բայց ձեզ պիտի տեսնենք իրիկուան կերակուրի ատեն :

( Կ ա ր մ ա ն ի ն ի ն է )

### Ա Ր Ա Խ Ե Ս Ք

Յօնուրաֆի համար պէտք է շած ամենէն աղէն պէտք չօլորիուն չնելուն կ'ըրու :

Առ 600 ցորեն աղէկ ծեծուած և չօրցած (nitrate de potasse) կիւվէրչէլէ , զի՞ր զաւաթի մը մէջ . և վրան լեցուր 12 արամ զած եաղը մէկ ու կես տրամ ջրով խառնած , ու ասոնց ամէնը մէկ խառնէ որ մեղրի պէս թանձր կ'ըլլայ .

Ասոր մէջը 40 ցորեն աղէկ հալածլանիշ եղած բամպակը քիչ քիչ գիր , և շիշէկ զաւազանով մը խառնէ . թող բամպակը 10 թաքիքէյի չափ մէջը մնայ , և ետքը շատ պաղ ջրի մէջ դիր , աղէկ մը լուս , մինչեւ որ զած եաղըին եքշիլիքը բոլորվին վրայէն ելլայ . վաղուն ջրի տակ լուսս առաւել աղէկ է . վերջապէս աղէկ մը չորցուր :

Զգոյշ եղեր որ կրակի կամ չրագի չի մօտեցուն նես , քանզի պարութէն զօրաւոր է , անմիջապէս կը

փոնկի պայթումով (1) : Բերանը իմթիղաճլը շիշէի մը մէջ 7 մաս (ether sulfurique) ծծմբոյ է թէր , և մէկ մաս 44 աստիճան զուար սէրինո զինողի լեցուր , և վերի պատրաստած բամպակդ բզկամբելով մէջը դիր , աղէկ մը չալխալամիշ ըրէ . եթէ զործածած նիւթերդ անարատ են , բամպակը աս էթէրին և զինէոզիին մէջ բոլորովին էրիմիշ կ'ըլլայ :

Առանց չկամ գործածելու , մամի իամ . վելիսի ներիւլ :

Աս գեղեցիկ բէնկը պօյամիշ ընելը շատ խօսուց , և շատ աժան է :

Պէտք եղածները ասոնք են :

Ա . Տէմիր սիրքէսի (հազըր չեն ծախեր)

Բ . Բրուսիաթ տը բօթաս (տեղին աղ մ'է)

Գ . Զամ հաղը (տիւմանիլը չըլլայ)

Դ . Շապ

Տէմիր մէրէսին չինելուն կ'ըրու :

Քէսկին քաձախի մէջ տէմիրի կտորներ , չիվի եայլն լեցուր . 5—6 օր մնայ . երբեմն երբեմն խառնէ , քիչ մը տաքցունես նէ առաւել աղէկ է . սիւզմիւշ ընելէդ եաքը առ ջուրը , որն որ կ'ըլլայ տէմիր սիրքէսի :

Վաղին զործողութիւն .

Կախ պօյամիշ ընելու կտաւկ աղէկ մը չուրով լուս . և աս տէմիր սիրքէսիին տուրուլմիշ եղածին մէջ պաթրմիշ ըրէ , սխմէ ու փոէ որ չորնայ . 10—12 ժամ անցնելէն ետքը աղէկ մը ջորով լուս :

Երկրորդ զործողութիւն :

Կերտէլի մը կամ մաստէլայի մը մէջ , կըտաւդ բոլորվին թրջելու չափ ըլլաճախ . ջուր լեցուր . 40 տրամ գեղին Բրուսիաթ տը բօթասը դիր , և 8 տրամի չափ զաճեաղը լեցուր , խառնէ որ էրիմիշ ըլլան . և պատրաստած քաձախը կըտաւդ ասոր մէջ խօմէ , 15 թաքիքէ զործէ , հանէ . 10 տրամ շապը թէքնէի մը ջրի մէջ դիր , և կտաւդ պայտղի ջրով լուսէդ ետքը առ շապը ջրով լուս , արև չեղած տեղ մը չորցուր , որ կ'ըլլայ այս զոյնը :

(1) . Առաջ չըցուցած բամպակն է . որ բամպակ վառութ ճանշուած է մինչև հիմայ և հասարակօրէն ամէնէն ջօրաւոր վառութներէ աւելի շուտ կը բռնկի :



## ՅՈՒՅԵՐԸՆԻՔ

## ԾՈՒՅ ԵՒ ՏՐԵՄԸՆԸ

Ծունմը ղեր և ծեր սրարոնի մը ոտքը կը խածնէ , պարոնը անմիջալիս արդարութեան գատաստանը կը վազէ ու բողոք կ'ընէ իր թեթևսուլիկ գրացին , որ անոր զրդումամբն էր որ իր շունը զինքը խածած է ; գրացին ալ ինքզինքը պաշտպանելու համար հետեւալ փաստերը յառաջ կը բերէ :

1. Իմ շունս չի խածներ , որովհետեւ սովորութիւն չունի :

2. Ծունո կոյր է և չկրնար տեսնել խածնեւ համար :

3. Մինչեւ անզամ տեսնէ ալ խածնելու համար , անկարելի է տունէն գուրս ելլելը , քանզի չափազանց կաղ է :

4. Ծունք թէ իր աչքերը և ոտքերը աղէկ ըլլան , սակայն ակայ չունի :

5. Իմ շունս վեց շաբաթ առաջ մեռաւ :

6. Ես բնաւ շուն չունէի :

— Մարդ կը հարցնէ իր բարեկամին թէ Օչանգակին ձայնը մահդ միաքդ կը բերէ՞ արդեօք : — Չէ , տէր իմ՝ կը պատասխանէ , առաւել զանգակին չուանը քու մահդ միաքս կը բերէ :

— Ենցածները Աինսինաթի քաղաքը հարսանիք մը եղեր է , թէ որ կարգուղին մայրը քոյր , մած մայրը՝ հարսին մայր , և քոյրը փեսակին եղբայրը ըլլալու ըլլայ նէ , առածը ով կընայ ըլլալ :

— Ինչո՞ւ համար ձեռնոցները ընդհանրապէս չի ծախուելիք ապրանք են : — Որովհետեւ ձեռքերնին կը պահէն :

— Կինը՝ մեր պատանեկութեան առաւօտեան աստղն է , մեր հասունութեան ցորեկուան աստղը , և մեր ծերութեան իրիկուան աստղն է , երկինք օրհնէ մեր աստղերը :

— Կը զարմանանք , արդեօք արտասուքի կաթիւ մը զետնէն վերցնող մը կայ :

— Պարսիկները առած մը ունին թէ “ տասը չափ խօսք խրկուեցաւ երկրիս վրայ և ասոնց ինը չափը կնիկները առին :

— Վոտերս Օրդիւ շոր իւրայունին Գէլ փուքը (ժետիւկը) կ'առնէ ու կը կոտրէ որ մէջը ուեսնէ թէ հովք ուսկից կու գայ :

## ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՑԱՂԻ ԿՅԹԻՆԵՐ

Մարդկացին կենաց ունայնութիւնը գետի մը նմանէ , որ շարունակ կանցնի կերթայ , գեռ տակաւին շարունակ դալու վրայ է :

Պօնարարթն էր այն որ ընտանեկան կոիւներուն վրայօք խօսելու ատենը ըստ . “ մեր աղտոտ լաթերը պէտք է որ դաղանի լուցուիին ” :

Ըմնէն վարպետ թուաբանը ան է՝ որ իր սըխալմունքները մէկիկ մէկիկ կրնայ հաշուել :

Ըստուածաշունը այս յուսոյ բանախին մէջ՝ պատուհան մ'է ուրիէ յաւիտենականութիւնը կը դիտենք :

Տեսած ես անանկ մէկը որ “ երկու խօսք ունիր քեզի ” ըստ ասենը , երկայն բարակ խօսք չունէ :

Երբոր օրիորդ մը հարցընէ քեզ թէ արդեօք իր հագուստը կը հաւնին , հաւաստի եղիք որ կսպասէ նաև իր անձնալ հաւնիլդ յուցունես :

## ԵՐ ՀԵՄՎՊԵՏԵՍԻՒԴԻ

Պ. Փ. Պօլիս . — Մեծապէս շնորհակալ եմք ձեր մարդասիրութիւնէ :

Ըղնուածարոյ ծնողք . Օմիւնիա : Կը խընդընմք որ ձեր զաւակաց ծնունդները ժամանակին մեզ ծանուցանէք :

## ԾԱՌԱՋԻ ԴՐԱ

Փետր. 22. Տիկին Յարութիւն Պարտիպաննեան . արտ.

” 23. ” Յայշաննէս Յակոբեան . էգ

Մարտ 16. ” Պալուստր Գալուտեան . արտ.

## ՄԱՀԱ

Փետր. 27. Թագուհի աղջիկ Յակոբե և

Մարտ 5. Կիւլյան Եօրպանձի Յայշեան Պրիորէ

” 6. Խանլէճի Մանուկ

” 12. Եղիսաբերդ Այտեղի Յակոբեան

” 14. Պօլեցի մալայիճի Դանիկէլ

## ԾԱՅԱԲԱՐԵՐ

Եղիկին մէջ երկպատակութեանց տեղի ըստալու երարեկարգութիւնը պահման համար , կը պարտութիւն ի պարտուց ստիպեալ այսուհետեւ անձնական պատույ գացող յօդուածները մերժել Տէտէեան տոպարանին մէջ տղել տալու :

Տիգրան Յարութիւն Տէտէեան

Զ Մ Ի Ի Ո Ւ Ւ Ի Ա

բանաւուն տէտէեան